ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

--- մայիսի 2021 թվականի №--Ա
ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի №492Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովն (այսուհետ՝ Հանձնաժողով) իր 2020 թվականի դեկտեմբերի 30-ի №492Ա որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) համաձայնություն է տվել «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) պատկանող՝ Երևան քաղաքի Բագրատունյաց 54/1 հասցեում գտնվող հողատարածքից 0,231766 հա մակերեսով հողամասի (այսուհետ՝ Հողամաս) նկատմամբ գրանցված իրավունքի՝ 83/100 հարաբերակցությամբ բաժնեմասի նկատմամբ իրավունքը «Տ-Քնսթրաքշն» փակ բաժնետիրական ընկերությանն օտարելու գործարքի (այսուհետ՝ Գործարք) կնքմանը՝ պայմանով, որ Գործարքի կնքումից և դրանից բխող իրավունքների, ինչպես նաև «Տ-Քնսթրաքշն» փակ բաժնետիրական ընկերության կողմից Հողամասի վրա որպես անբաժանելի բարելավում կառուցված շինության նկատմամբ իրավունքների պետական գրանցումից հետո Ընկերությունը ձեռք կբերի դրա նկատմամբ Հողամասում իր ունեցած բաժնեմասի համամասնությամբ սեփականության իրավունք: Որոշմամբ սահմանվել է Գործարքի կնքման վեցամսյա ժամկետ,

բ) Ընկերությունը 2021 թվականի ապրիլի 28-ի №Ե-151-21 գրությամբ դիմել է Հանձնաժողով և հայտնել, որ «Տ-Քնսթրաքշն» փակ բաժնետիրական ընկերության կողմից կառուցված շինության ավարտական ակտի ձևակերպման գործընթացն, ըստ առկա կանխատեսումների, հնարավոր չէ ավարտել մինչև Որոշմամբ Գործարքի կնքման համար

սահմանված ժամկետի ավարտը, ուստի վերջինս խնդրել է վեց ամսով երկարաձգել Գործարքի կնքման ժամկետը,

գ) Հանձնաժողովն, առկա փաստական հանգամանքների ուսումնասիրության հիման վրա, գտնում է, որ Գործարքի կնքման ժամկետը ենթակա է երկարաձգման վեց ամսով, և

հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածը և Հանձնաժողովի 2019 թվականի փետրվարի 27-ի №39Ն որոշմամբ հաստատված կարգը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Հանձնաժողովի 2020 թվականի դեկտեմբերի 30-ի «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության գույքի նկատմամբ իրավունքի բաժնեմասի օտարմանը համաձայնություն տալու մասին» №492Ա որոշման 2-րդ կետում «վեց» բառը փոխարինել «տասներկու» բառով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
--- մայիսի 2021թ.